ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ՇԻԼԹՅԱՆԻՆ

ՎԱՂԴԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԴԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՉԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՇԻԼԹԵԱՆԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ:

Տիրոջ ողորմությամբ, այսօր, 20 ապրիլ 1960-ին, հոգեկան մեծ ուրախությունը ունեցանք Մայր Տաճարիս Ավագ Սեղանի Աստվածամոր նորակերտ նկարը օծելու և զետեղելու իր տեղը, Ձեր իսկ ներկայությամբ:

Աստվածամոր սույն նկարը Ձեր ձեռակերտն է, արգասիքը Ձեր արվեստին, Ձեր փայլուն տաղանդին, Ձեր հայ ստեղծագործ ոգին, զոր Դուք երջանիկ ներշնչումով մը անվանեցիք «Հայաստանի Տիրամայր», և զոր Մենք կնկատենք Ձեր սրտի պարգևը՝ մատուցված աստվածակառույց Ս. Էջմիածնին և հայ հավատացյալ ժողովուրդին:

Սույն հայրապետական կոնդակով կշնորհավորենք և կօրհնենք զՁեզ և Ձեր գործը, և կաղոթենք առ Տեր՝ Ձեր բաջառողջության և արևշատության համար, որպեսզի տակավին երկա՜ր, երկա՜ր տարիներ շարունակեք Ձեր ազնիվ ու ստեղծարար աշխատանքը՝ ի փառս նկարչական արվեստի և ի պարծանս Հայ Ազգի, որուն հարազատ զավակն եք Դուք, ծնած Նոր-Նախիջևանի աստվածասեր մեր ժողովուրդի ծոցեն:

«Շնորհք Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի և զօրութիւն Սուրբ Հոգւոյն եղիցին ընդ Ձեզ այժմ և միշտ: Ամէն»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն ապրիլի
1960 փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԹ,
ի Ս. Էջմիածին: